

## ՆԵԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

#### ՅԱԼԵԼՈՒԱԾ

Ի ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՍ Ս. ԵՓՐԵՄԻ

ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻ

(Դար. Սիսն, 1931, թիւ 6 էջ 185)

Աշկն է խորհրդակից ծածռւկ ներքին մըտացն . ոչ պահէ ընդ նմա ստուգութիւն , զի յայտնէ զներքին խորհուրդս նորա : Զի խորհուրդն ներքին որ ծածռւկ է , յայտնի է , թէ զիւրդ եւ զի՞նչ է : Եթէ լիտենան սակաւ միտքն , աղաղակէ ակն առաջի արտաքնոց զծածռւկ արատս տպեղութեան նորա , յայտնէ առաջի տեսողաց : Ո՞ սիրտ ծածռւկ , ո՞ւր ես զի արար զքեզ ակն մերկ , տեսանեն ծանունք զանարգանս քո , զի սահիս ի վերայ բրաց : Աստուած արար սինեակ զի բնակեցէ սիրտ քո իրրև ըզգաստ : Զծածկութիւն որ է ի սենեկին , ցանեն զամենայիւ հայեցածք : Ո՞ ոչ քարոզէ զքեզ ո՞ սիրտ : Եւ խայտառակէ զըրպարտեալ , և զրկեալ է ակն , թէ լիտի է քոն զամենայն զգայունս : Իրրև զոն եւս չար քան զնա անդամք որ ին ի մարմին : Ահա ամենայն անդամք ի միասին յայտնեն զառականս սրտի : Բարժանեալ են անդամք ի սրտէ : Թագաւոր՝ է զգայնոց . եթէ յանգարձ(1) կապեսցէ սիրտ զիսորհուրդ սիրոյ ընդ իմիք , յայտնեն զիսորհուրդսն անդամքն : Զի գուշակ իւր յընտանեաց(2) է : Բներան ճառիւքն զոր երկրորդէ , զուշակէ թէ ում են միտքն : Զի որով միշտն կայ ի բերան , ճաշակ ի սիրտն թէ զիւրդ է , զճաշակն զոր տայ բերան , ի ներքին համբարեաց(3) կարկառու : Զի յոր ինչ բը-

նակաւոր է սիրտն , ի նոյն խոկայ եւ լեզուն : Արատցեալ ըմբռնի ի մէջ ըրթանց որ ինչ ծածռւկն է ի խորհուրդսն : Զի բաց է միշտ բերան , զերծանին ելանին ծածռւկաւք : Զի չիք դռնապան եւ ոչ դռւան , կողոպտեալ լինին միտք : Բաժանեալ է բերան ի սրտէ , եւ զողանայ յայտնէ ըզգածռւկս նորա : Մեծարեալ են միտքն եթէ ի ներքս իցեն , եւ ոչ զիտեն եթէ որտաքս սահին , բարժանեալ են ի սրտէ , եւ ականջք լուսք ի խաւսից , խաւսիւքն ուրում ծորաւի են լսել , քարոզին թէ զինչ են միտքն : Ճառն որ նոյցա քաղցրանայ , հայելի է նա մտաց , նովաւ տեսանեն ըզգանա ի ծածռւկ : Զի փորձեն թէ զինչ քաղցրանայ նմա ըստ ծարաւոյ մտացն , նոյնպէս լուսւն եւ մուծանեն լսելիքն , սիրէ , զի յամենայն զրուցի , զոր ինչ սիրէ զիւպելու նմա . զեղու եւ հեղու յունկանէ ճառն որ տեսլի է մտացն , ահա աղաղակն երկոքեան ականջքն թէ ո՞ր լուր քաղցրանայ նմա(1) : Մերկացեալ եւ յայտնեալ կան միտքն իւրեւ զարբեալ առաջի արտաքնոց : Նոյ որ արեցաւ եւ մերկուցաւ , երկու եղբարք ծածկեցին զանարգանըն , զորդի հաւրն զգայնոց(2) , յաճախին անդամք զանարգանս : Բայց յիւրուի պաշտեցան ի նոյցանէ եւ ի սոցանէ : Որդիի նոյի զի տեսին զհայրն թէ ցած էր , ծածկեցին զանարգանսըն : Վասն զի ցած էր ի լրջէ , ծածկեցին ի քուն զմերկութիւն նորա : Իսկ զգայունք առակեն ըզգմուս , քանդի լիտի է առակէ զնա զոյն երեսաց , զի յուցցէ թէ զարգասէր է : Առակէ զնա աւգ ստից , զի յուցցէ թէ աղատասէր(3) է : Առակեն զնա եւզք եւ խունզք , զի յուցցին զշաւյութիւն նորա : Մանակէ զնա պճնել զլիսոյ , զի յուցցէ թէ կորագլուխ է : Մանակէ զնա փայլիւն հանդերձից , զի յուցցէ ըզգլուսութիւն նորա : Ամենեւին աղաղակէ զիւրմէ , թէ ծառայէ է նա մեղաց : Սիրտն թագաւոր անդամոց , պաշտէ ծառայութիւն ցանգութեանց : Արտաքին անդամքն աղաղակեն թէ պարտեցաւ զլուին նոյցա ի ներքս : Մասայութիւն

(1) Այսպէս յօրինակին :

(2) Օր . զրէ յնախնեաց :

(3) Կարծեմ թէ՝ համբարաց ընթեռնի է :

(1) Բնազիրն աստէն , որպէս եւ բազում ուրեք ի ճառիս , խանգարեալ է :

(2) Տ . Եննդ . 9 , 20-27 :

(3) Բառն այս պակասէ ի բառզիրս :

ծածուկ սրտի, ահա քարոզի յանդաման։ Մատիր առ արտաքին զգայութիւնսն, եւ նոքա պատմեն զպատմութիւննորա։ Արտաք նորա ներքինք, քարոզեն ի ձեռն զարդարանացն։ Արտաքին զեղովն երեւի ծածուկ տպեղութիւնն իւր ներքին։ Ար ոչ զիտէ զնա ի ներքոյ, արտաքոյ կարէ ուսանել։ Մածուկք նորս որ ոչ քննին, ի ձեռն յայտնեաց իւրոց հասանին։ Զի՞նչ հարկ է խնդրել ի ներքոյ, զի ահա ամեն նեւին արտաքոյ յածի։ Մի խնդրեր ի ներքս զմիտս, զի ի վա՛րս իւր նկարեալ է։ Արտաքին երեսք մարդոյն, հայելի են խորհրդոց նորա։ Նկարեալ են ընտրողաց ծածուկք նորա ի յայտնիս իւր։ Եւ չնոյ որ ոչ երեւի, մարթի երեւիլ մարմով։ Թէ զի՞նչ են բարք չնոյ, մարմին կարէ ուսուցանել քեզ։ Եթէ զոյ ցանդութիւն ի բարս նորա, մարմին կարէ յայտնել քեզ։ Եթէ զոյ ի նմա հպարտութիւն, մարմին կարէ գուշակել։ Մատիր առ մարմին արտաքին, եւ ահա տեսեր ամենեւին զնա։ Տես թէ բարի բնութեամբ, քննեա թէ չարիցէ բնութեամբ։ չէ չար կամ բարի բնութեամբ, զի կամաւք իւրովք է բարի կամ չար։ Մատիր առ արտաքին զգայունս, եւ ահա թուեն զներքին արտասոն։ Մի քններ զծածուկ իրս, զի հաւանեցուցանեն զքեզ յայտնիքն։ Աղաղակեաց մարզարէ<sup>(1)</sup>, թէ զստերք Սիովսի կաւշկաւք եւ կաքաւելով բարկացուցին։ Համարեցաւ եւ թուեաց զզարդս նոցա, եւ համեմատեաց եղ զնեզութիւնս նոցա։ Զի անարդեալ զարդարանացն իւրեանս յերկիւդէ նեղութեանցն իւրեանց։ Թուեաց բովանդակեաց զզարդս նոցա, եւ կոչեաց ի վերայ նոցա զերեվարս։ Համեմատեաց եղ զփոշի ճանապարհացն, ըստ ցանելոյ եւ հոտոյ խընկոցն։ Փոխանակ ցանկալի ծամակալացն, եւ կնտութիւնս գարշելիս։ Փոխանակ հիւսից պատմակալ ծամակալացն, եւ ահա թուեալ ծամակալաց, եւ կամաւք իւրեանցն<sup>(2)</sup>, եւ ականակապն կամարաց, երէզ<sup>(3)</sup> գաւտի ածէին ընդ մէջ։ Խոստացաւ նոցա բոկութիւն, փոխանակ պանելոյ կաւշկաց իւրեանց։ Զի գործեցին ամբու-

րըշտութիւն ի ծածուկ, խայտառակեաց գերութիւն յայտնապէս։ Պոռնկութիւն զոր սիրեցին, ետ զնոյն նոցա ի գերութեան։ Չորչարեցաւ պոռնկութիւն ի գերութեան, զի եղեն պէտքն առանց կարգի, զործէր առանց տըրինի բանութեան, եւ ոչ կամաց, ետ զպոռնկութիւն պիզծ կանանց, եւ ոչ ետ ըստ կամաց նոցա։ Ոչ ետ զնա որպէս սիրեցինն, զի մի խափանեցի վրէժմառութիւնն։ Ոչ ըստ կամեալ<sup>(4)</sup> պոռնկէին։ Ար ինչ ի հանգիստն էր նոցա, ետ զնոյն իրրեւ ի տանջանս։ Արովք բարկացուցին, տանջեցան։ Զի խմատուն է եւ խորին հատուցանուն։ Ածղացան մարմինք նոցա ի գերութեան, եւ չարաւոտեցան խունկք նոցա<sup>(5)</sup>, Ապականեցան զեղք նոցա, եւ խարուեցան կորեան զոյնք նոցա։ Ոչ էին երեւելիք ի գերիսն որ երեւելիք էին ի քաղաքս։ Ոչ ոք ճանաչեաց<sup>(6)</sup> զնոսա յանուանէ, զի եղծան ի գերութեան զոյնք նոցա։ Յանուանէ նոցա լսաւզ ճանաչէր յորժամ խաւէին։ Խոնարհեցոյց գերութիւն զգիրդ կանայս որ ի խաղաղ շինին փափկանային, զի գտէր շինին բարկացուցին։ Առ ի նուցանէ վրէժ անապատն։ Որոյ փափուկ էին երեսք իւր, նորա առաւել այրեցան զէմք։ Միում միջուրէի ոչ տեւեաց մաքրել եւ զտեալն բազում ամաց։ Փափուկ ծաղիկ զոյնք նոցա եհաս ի տապ եւ խամբեցան։ Այրեցան յարեւու զարդք նոցա, ծաղիկքն հովասունք զարդուք խաղաղութեան<sup>(7)</sup> տպեղ էին, առաջի Բարձրելոյն<sup>(8)</sup> խոնարհասիրիք<sup>(9)</sup>։ Միւրմամբ<sup>(10)</sup> զերութեանն գեղեցկացան, առաջի Ստուգին ապաշխարող սրտիւ։ Ի շինի<sup>(11)</sup> մարմին պայլ ծառայնայ<sup>(12)</sup>, ի գերութեանն հոգի կեղեցկանայ։ Պնակաց զնոսա չարն ի շինի, զի տպեղասցին զարդուք իւրեանց<sup>(13)</sup>։ Տզեղացոյց ըզ-

(1) Թուի թէ կամել ընթեռնի է։

(2) Տ. Աղք, զլ, 4։

(3) Անսովորական խոնարհումն։

(4) Օր. վրիպանօր ունի աղաղութեան։

(5) Օր. սխալանօր զրէ արձելոյն։

(6) Նոր ինչ յօղուածոյ բառ, զոր օր. թուի թէ գրիպանօր զրէ խոնարհութիւն։

(7) Օր. ունի ծիւրամբ։

(8) Օր. ունի ինի։

(9) Օր. աստին ծակոտ եւ մաշեալ։

(10) Օր ունի իւրեան։

(1) Ես. 3, 16 հհ. եւ յայլ տեղիս։

(2) Նշանակութիւն բառիս անյայտ է ինձ։

(3) Երեզ ի կիր արկեալ թուի թէ իրրեւ երփ։

նոսա Բարին ի գերիս, զի զարդարեսցին  
նմա զեղջիւ: Բաբելոն և Ասորեստան որ  
են զբացիք մեր մաւտեսորք խաղացին ե-  
լին զերեցին զգստերս Ալովնի, զի ամբա-  
րձատեցան: Եթէ ի հեռույ չ . . . .<sup>(1)</sup> զերե-  
ցին, քանի՛ եւս զերեցին զմեղ ի մաւ-  
տոյս: Աստուեա՛ Միքին<sup>(2)</sup> ի զստերս քո,  
զի ոչ սաստեաց Ալովնի ի զստերս իւր: Ա-  
զափանայք քո ահա կտի են, ազառ կա-  
նայք քո չեն ծանունք: Կոյսք քո . . . .<sup>(3)</sup> ք(?)  
են, զզ[հստք] քո [լկտիք են], զդեստ  
հանգերձից նոցա [լիլ]ք . . . . լկտի  
. . . . որք երթան ի հարսանիս . . . . ճ . . .  
զ . . . իր[րիւ] . . . . անս . . . . հ . . . .  
մինչ չեխն եկիուլ յաշակերտութիւն: Իրեւ  
աշակերտեցան, զարդարեցան: Իրեւ լզ-  
զաստացան . . . . ն կոյսք . . . . տացեալք  
արգելեալք . . . . ան յայրատութիւն  
. . . . եւ հրապարակս . . . . կա . . . ընդ  
ձեռամբ հաւը . . . . ահ[իւ] [իւ] [ի] զու-  
շութեամբ, յառաջազոյն լնզրի[լ] զեկե-  
ղեցի ընդ մուր: Եւ զգարդապես փոխա-  
նակ հարց: . . . . ս երեսոց ս . . . . եւ ոչ  
կացին ի սմին ուխտի: [Ե]լին յեկի[զե-  
ցոյն] . . . . —

Մանօրութիւն: — Աստէն, ի կատարածի  
իջին (թղ. 385ր) դադարեցուցանէ զրիչն  
զրովանդակ զրուածն: —

Հրապարակեաց

Ֆ. Յ. Մ.

Վ. Ե. Պ.

(1) Բառս եղծեալ է եւ անընթեռնի:

(2) Խմա՝ ՄՃԹԻՆ:

(3) Թերեւս ընթեռնի մաթրեմ: — Աստի բա-  
կսեալ մինչեւ ի կատարած մատիս զրտիւնն ուրեք  
ուրեք թերեալ եւ եղծեալ է: Բարւոր թուեցաւ ինձ,  
որչափ ինչ հնար էր: ի կարծ զատելով, լնուլ ըգ-  
թերին թնազրին:

## ՄԻՋՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պ. Ե. Ե. Պուէնոս Ալբէսէն կը հարցնէ:

«Հայ Առաք. Եկեղեցին կ'արտօնէ՝ կա-  
նանց ուրիշազի եկեղեցիին մեջ պատրազի  
տեսն երգեցողուրիեան մասնակցին. և օրի-  
որդները շապիկ հազնին, դպրուրիեան կամ  
սարկաւագուրիեան պատօնը կատարեն»:

Վերի տօղերուն մէջ կան մէկէ տւելի  
հարցումներ, որոնց միասմի կը պատաս-  
խանենք ստորեւ:

1. — Հայ Առաք. Եկեղեցին ոչ միայն  
կ'արտօնէ, այլ և կը հրահանգէ, որ ժողո-  
վուրդը, այր և կին առանց խորութեան,  
մասնակցի ինչպէս ժամերգութեան նոյնպէս  
և Ա. Պատարագի երգեցողութեան, պատ-  
շաճօրէն եւ երկեղածութեամբ ձայնակ-  
ցելով զարաց դասին, բայց ոչ՝ մեներգո-  
ղին, սարկաւագներուն և մանաւանդ պա-  
տարագիչին:

2. — Հայ Եկեղեցւոյ հին սովորութեան  
համաձայն միայն արական սեռէ անհատ-  
ներ շապիկ կը հազնէին: Բայց նոր ժամա-  
նակներուն մէջ օրիորդներ ալ սկսան շապիկ  
հազնիլ եւ, այսպէս ըսելով, հրամանաւ  
զգրութեան պաշտօն կատարել: Այսնորու-  
թեան մասին Հայ Եկեղեցւոյ հողմէ որեւէ  
կանոն չէ սահմանուած զեռ: Եկեղեցւոյ  
որդեգրած կանոնին համաձայն, ոկզբուն-  
քով, զգրութեան պաշտօն կատարող-  
ները պէտք է որ զգրութեան աստիճան-  
ները առած ըլլան: Այդ աստիճանները կը  
վերաբերին, սակայն, անշուշտ արական  
սեռէ զգիրներու միայն: Պէտք է ըսել  
նաև որ այսօր հայ Եկեղեցիներու մէջ  
շտահը զգրութիւն կ'ընեն առանց աստի-  
ճան առած ըլլալու: Ասիկա կանոնազման-  
ցութիւն մըն է:

3. — Ոչ միայն օրիորդները, այլ եւ  
պարոնները, Եկեղեցւոյ մէջ սարկաւագու-  
թեան պաշտօն չեն կընար կատարել որ-  
քան ատեն որ չունին սարկաւագութեան  
աստիճանը: Բուն սարկաւագութիւնը ներ-  
կայիս զրեթէ լոկ վանքերու մէջ մնացած  
է: Շատ մը քաղաքներու մէջ կը զանուին  
ուրաբակիրներ, որոնք կը կատարեն սար-  
կաւագներու պաշտօնին մէկ մասը, այս-